# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# Վ Ա Յ Ո Ց  Ձ Ո Ր Ի
# Մ Ա Ր Զ Պ Ե Տ


**ք. Եղեգնաձոր, Շահումյան 5** — **Հեռ. (+374281) 2 25 22**


**«______» «________» 2023թ.** **N ________________**

**«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» ՀԿ –Ի**

**«ՀԵՏՔ» ԹԵՐԹԻ ԼՐԱԳՐՈՂ**

**ԳՐԻՇԱ ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻՆ**

**Հարգելի՛ պարոն Բալասանյան**

Ի պատասխան Ձեր 28.08.2023թ. գ/հ Մ-7408-2023 դիմումի՝ տեղեկացնում ենք, որ ՀՀ Վայոց ձորի մարզում գործում է մարզային ենթակայությամբ 45 հանրակրթական ուսումնական հաստատություն: Հայտնում ենք, որ ուսուցչի թափուր տեղը համալրվում է մրցութային կարգով: Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակվում է հաստատության կայքէջում և ներկայացվում է հրապարակման՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, համապատասխան պետական լիազորված մարմնի կայքէջերում և «Կրթություն» շաբաթաթերթում: Հայտարարությունը կարող է հրապարակվել նաև տեղական կամ առցանց լրատվամիջոցներում և հարթակներում: Ուսուցչի թափուր տեղը չհամալրվելու դեպքում առարկայի դասավանդումը կազմակերպվում է հեռավար:

2023- 2024 ուստարվա աշակերտական համակազմի վերաբերյալ տվյալները մուտքագրված են Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում(ԿԿՏՀ):

8/31/2023

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**Հարգանքով՝** Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**


Կատարող՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի
կրթության, մշակույթի և սպորտի վարչության
գլխավոր մասնագետ
Հ. Հարությունյան բջջ: 093 36 98 82